ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ



*06.12.2014. Սուրբ Նիկողայոս Զմյուռնիացի Սքանչելագործ հայրապետի հիշատակության օր*

*07.12.2014. Բարեկենդան Սուրբ Հակոբի պահքի*

*09.12.2014. Սուրբ Աննայի հղիությունը Սուրբ Մարիամ Աստվածածնով*

*11.12.2014. Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի, Սուրբ Մարուգե ճգնավորի եւ Սուրբ Մելիտոս եպիսկոպոսի հիշատակության օր:*

ՏՐԱՆՍՊՈՐՏ

## ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ



*Առատ ձյան պատճառով Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհի Գուդաուրի (Պոստա)-Կոբի ճանապարհահատվածում բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում է հակասահքային շղթաներով: Այս մասին տեղեկացնում են Վրաստանի տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարության ավտոճանապարհային դեպարտամենտից:*

Երթեւեկությունը բաց է նաեւ երկու եւ ավելի տանող կամրջակներով շարժվող տրանսպորտային միջոցների համար:

Ըստ Վրաստանի Շրջակա միջավայրի հարցերով ազգային գործակալության տեղեկության, Գուդաուրի (Պոստա)-Կոբի ճանապարհահատվածում կուտակված ձյան պատճառով ավտոտրանսպորտային միջոցների երթեւեկությունը պետք է ընթանա անընդհատ ռեժիմով, բացառապես՝ ձնաբքերից պաշտպանող թունելներով:

Կցորդային եւ կիսակցորդային տրանսպորտային միջոցների, ինչպես նաեւ 30-ից ավելի նստատեղերով ավտոբուսների երթեւեկությունը իրականացվում է միակողմանի՝ թունելների միջով:

Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս (Դարյալի կիրճ) ավտոմոբիլային ճանապարհի 134-135 կմ հատվածում կանգառ կատարելն արգելված է:

Նշված ռեժիմով երթեւեկությունն իրականացվում է ոստիկանության անմիջական վերահսկողությամբ ու համակարգմամբ:

Մյուս հատվածներում ավտոտրանսպորտային միջոցների երթեւեկությունն ազատ է:

ՀՌՉԱԿԱԳԻՐ

## ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ը ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է




*60 տարի առաջ՝ 1948-ի այս օրը, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: 1950-ին Գլխավոր ասամբլեայի առաջարկով տարբեր պետություններ եւ կազմակերպություններ, իսկ այսօր նաեւ ամբողջ աշխարհը դեկտեմբերի 10-ը նշում է որպես մարդու իրավունքների միջազգային օր:*

Հռչակագիրը թարգմանվեց ավելի քան 360 լեզուներով. այսքան շատ լեզուներով աշխարհում որեւէ այլ փաստաթուղթ չի թարգմանվել:

Մարդու իրավունքների հռչակագիրն այն հիմնական փաստաթուղթն է, որում առաջին անգամ ամրագրվեցին մարդու եւ անհատի հիմնական իրավունքները:

Այս օրը բազմաթիվ իրավապաշտպան կազմակերպություններ միջոցառումներ են կազմակերպում՝ ընդգծելով մարդու իրավունքների պաշտպանության առաջնայնությունը եւ կարեւորությունը:

Մարդու իրավունքներն ու հիմնարար ազատություններն ամրագրվել են Վրաստանի եւ Հայաստանի սահմանադրություններում, երկու երկրներում էլ ստեղծվել է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ:

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

## 15-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆԸ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ



*Դեկտեմբերի 1-6-ը անցկացվեց Թբիլիսյան 15-րդ միջազգային կինոփառատոնը, որը կազմակերպիչներն այս տարի անվանեցին «կանաչ»: Ամեն տարի կինոփառատոնի կազմակերպիչներն ընտրում են սոցիալական որեւէ հրատապ թեմա, որին նվիրվում է մի ամբողջ սեկցիա, բազմաթիվ բանավեճեր ու միջոցառումներ. այս տարի այդ թեման դարձել է բնապահպանական իրադրությունը եւ ուրբանիզացումը:*

Կինոփառատոնը բացվեց իրանցի հայտնի ռեժիսոր Մոհսեն Մախմալբաֆի «Նախագահը» ֆիլմով, որի նկարահանումները տեղի են ունեցել Վրաստանում:

Թբիլիսիի միջազգային կինոփառատոնի շրջանակներում ցուցադրվեցին շուրջ 150 կինոնկար. փառատոնին մասնակցելու համար Վրաստան ժամանեց 29 երկրի 80 ռեժիսոր: Այս տարի ժյուրիի նախագահ է ընտրվել իտալացի կինոքննադատ, կինոգետ եւ պրոդյուսեր Մարկո Մյուլլերը:

Կինոփառատոնն անցկացվում է կինոարվեստի «Պրոմեթեւս» կենտրոնի կողմից՝ Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության ու Կինեմատոգրաֆիայի ազգային կենտրոնի աջակցությամբ: Փառատոնի գլխավոր նպատակն է՝ նպաստել մշակույթների մերձեցմանը եւ վրաց հանրությանը ծանոթացնել համաշխարհային լավագույն կինոնախագծերին:

«ՆԻՃԻԵՐԻ-2014»

## ԳԵՎՈՐԳ «ԿԱՌՈՒԶՈՆ»՝ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎՈՒՄ



*Ժյուրիի որոշմամբ, հայտնի են դարձել այն 40 լավագույն մասնակիցները, ովքեր կշարունակեն պայքարը «Ռուսթավի-2» հեռուստանախագծով հեռարձակվող «Նիճիերի (Տաղանդավոր)-2014» մրցույթում:*

Երկուշաբթի օրը՝ դեկտեմբերի 8-ին, տեղի կունենա մրցույթի կիսաեզրափակիչ փուլը, որի ընթացքում արդեն հանդիսատեսն ինքը կորոշի այն մասնակիցներին, ովքեր ելույթ կունենան մրցույթի եզրափակիչ փուլում: Կիսաեզրափակչի մասնակիցների ընտրության ժամանակ ժյուրին առանձնակի ուշադրություն է հատկացնում երաժշտական համարների կատարման վարպետությանը: Գործնականում լավ կատարումով աչքի ընկած բոլոր մասնակիցներն ստացան կիսաեզրափակչում ելույթ ունենալու իրավունք: Նախնական տվյալներով, կիսաեզրափակիչ մրցույթում առաջատարների թվում են Գեւորգ («Կառուզո») Պետրոսյանը, Անալյա Ձիբլաձեն եւ Ինդիրա Ձղերենիան:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Մարդաշատ, շատ երթեւեկելի: 10.Ծով՝ Սեւ ծովի հարեւանությամբ: 11.Հարմարվել, ...յի ենթարկվել: 12.Մի քանի նետ: 13.Կոմպոզիտոր Ռավելի գործերից: 14.Գրականության ժանր: 16.Հովհ.Թումանյանի պոեմներից: 17.Հարդանոց: 20.... Կոնան Դոյլ: 21.Օվկիանոսային հզոր ալիք: 22.Վրաց թագուհի: 23.Գրականության մեջ օգտագործվող միջոց: 26.Հույն հայտնի փիլիսոփա: 29.Ութ երաժշտից բաղկացած համույթ: 32.Լծկան կամ բեռնակիր կենդանի: 35.Ապրեմ, ..., ապրի: 36.Կրկեսի ասպարեզ: 37.Նենգ, դավադիր: 38.Եռանկյունաչափական ֆունկցիա: 39.Բեմարվեստի տեսակ: 40.Ֆրանսիացի գրող Դենի ...: 41.Հայ ֆիդայի: 42.Ավ.Իսահակյան «...ի վերջին գարունը»: 44.Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը այլ կերպ: 47.Գետ Միջին Ասիայում: 49.Գլխի հետ կապված հիվանդություն: 51.Վասակի որդիներից («Վարդանանք»): 52.Ալ.Շիրվանզադե «...ի խնամին»: 56.Աղվեսն ասաց ... («Չարի վերջը»): 58.Ավ.Իսահակյան «...ի սերը»: 61.Քաղաք Հայաստանի Շիրակի մարզում: 62.Հանրահայտ ֆիզիկոս: 63.Ղազախստանի կարեւոր քաղաքը: 64.Նախկին Դորպատը: 65.Հանրահայտ մանկավարժ: 66.Վրաստանի Ախալքալաքի ռեսուրսկենտրոնի պետը (անունը): 67.Ժխտական նախածանց: 67.Ասորեստանի թագավոր:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Թագավորական (իշխանական) տոհմ Հայաստանում: 2.Հովհ.Թումանյան «Լոռեցի ...»: 3.Հայ անվանի բանաստեղծ: 4.Երկանդամ: 5.... ու աղեղ: 6.Կաթնամթերք: 7.Մուսաների լեռը: 8.Գյուղ Վրաստանում (Աբխազիայում): 9.Հին հռոմեացի ճարտարապետ: 13.«Դեկամերոնի» հեղինակը: 15.Ծծկեր, կուրծք ուտող: 18.Հայկական տոմարի 17-րդ օրը: 19.Երիտասարդ հայ երգիչ: 24.Անգլիացի ֆիզիկոս: 25.Պետություն Կենտրոնական Ամերիկայում: 26.Թումանյանի հերոսներից: 27.Պետություն Ասիայում՝ Շրի ...: 28.Սեղանի խաղ: 29.Ծագումով հայ, շվեդացի դիվանագետ: 30.Երգչի ձայն: 31.Զինվորական միավորում: 32.Պետություն Կենտրոնական Աֆրիկայում: 33.Քաղաք Ռուսաստանում: 34.Թանկարժեք մետաղ: 43....ի ուսմունքը կենդանիների մասին: 45.Գետ Հայաստանում: 46.Հայ պատմիչ: 48.Հանրահայտ հածանավը: 50.Իրական, ոչ շինծու: 53.Մարկոս աղա ...: 54.Ցեմենտ-...: 55.Նեցուկ, հենարան: 57.Ներվ: 58.Ռուս գրող Չեխովի անունը: 59.Գերեզմանատուն Փարիզում՝ ... Լաշեզ: 60.Ամերիկայի ֆիզիկոս, Նոբելյան մրցանակակիր: 61.Թիվ չունեցող, անչափ շատ:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Անեքսիա: 8.Ագարա: 9.Ռուր: 10.Եղեռն: 13.Բասմա: 18.Բրոշ: 19.Խաթաբալա: 22.Նինոս: 23.Պտղատու: 28.Վայել: 29.Անագե: 32.Երե: 33.Մխում: 34.Նեման: 37.ՀԺԿ: 39.Անուն: 41.Իմալ: 44.Լղար: 46.Միթե: 47.Նամ: 49.Ղազ: 50.Խաբուսիկ: 52.Գչիր: 54.Ղասաբ: 55.Քուրա: 56.Լա: 57.Լազեր: 58.Լռին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ռենե: 2.Քսան: 3.Ծառա: 4.Քարբ: 5.Կայսր: 6.Լավաշ: 11.Ղռան: 12.Ռուան: 14.Աբեղա: 15.Մոնտե: 16.Պաս: 17.Կապ: 20.Թիրախ: 21.Բոհեմ: 24.Տվեն: 25.Այժմ: 26.Ուլան: 27.Սերժ: 30.Նման: 31.Գույն: 35.Եսիմ: 36.Աղաթ: 37.Հող: 38.Կերակուր: 40.Ուրմաս: 42.Մինչ: 43.Լեզրան: 44.Լյուբա: 45.Աղիքե: 48.Ախազ: 51.Բալ: 52.Գալ: 53.Իլի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445